ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԼԵՎՈՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՍՆՆԴԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԺԹ 00.03 «Սոցիալական հոգեբանություն. (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր Նաիրա Ռաֆիկի Հակոբյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Հոգաբանական գիտությունների դոկտոր՝ Վլադիմիր Սևանի Կարապետյան Հոգեբանական գիտությունների թեկնածու՝ Գայանե Սիմոնի Հարությունյան
Առաջատար կազմակերպություն՝	Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի հունիսի 20-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2017թ.-ի մայիսի 20-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր՝	Կ. Ե. Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակների ընթացքում համաճարակային բնույթ ստացած սննդային վարքի շեղումների խնդիրը ծավալուն է, քանի որ այն ներառում է բազմաշերտ երևույթներ՝ սննդակարգի կտրուկ փոփոխություններից մինչև սննդային վարքի նյարդային խանգարումներ: Խնդրի տարածվածությունը և զարգացման հեռանկարները դրա մանրակրկիտ ուսումնասիրությունը դարձնում են հույժ հրատապ, մասնավորապես խնդրի առաջացման հիմնաղբյուրների տեսանկյունից: Այդպիսի հիմնաղբյուրներից թերևս ամենաազդեցիկների թվին կարելի է դասել սոցիալական դիրքորոշումների ու կարծրատիպերի և անձի անձնային հատկանիշների փոխազդեցությունը: Նման զարգացումների լույսի ներքո հոգեբանական գիտակարգի, մասնավորապես սոցիալական հոգեբանության առաջնահերթ խնդիրներից է տարաբնույթ տեսանկյուններից վերհանել այն օրինաչափությունները, որոնք առավելապես նպաստում են սննդային վարքի շեղումների հիմնախնդրի առաջացմանը, ինչի օգնությամբ փնտրել դրա կանխարգելման, կամ հետագալուծման հնարավորինս արդյունավետ ուղիներ:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Սննդային վարքի շեղումներն ուսումնասիրվել են հոգեբանական գիտությունների տարբեր ճյուղերի առաջատար ներկայացուցիչների կողմից: Խնդրին տրվել են բազմաթիվ անվանումներ և առաջարկվել են դրանց առաջացման ու լուծման վերաբերյալ տարբեր հայեցակետեր: Այնուամենայնիվ, խնդրի ծավալունությունը, դրա առաջացման և զարգացման բազմաշերտ պատճառահետևանքային կապերի ինքնությունը թելադրում է դրա առավել մանրակրկիտ ուսումնասիրության անհրաժեշտությունը տարաբնույթ տեսանկյուններից: Մասնավորապես արդիական է սննդային վարքի շեղումների

առաջացման և զարգացման գործում ահռելի ազդեցություն ունեցող սոցիալական դիրքորոշումների և կարծրատիպերի ազդեցությունը անձի անձնային հատկանիշների, ինքնագնահատականի, ինքնավերաբերմունքի համատեքստում: Տվյալ երևույթների մասնակի ուսումնասիրություններ կատարվել են մի շարք ակնառու հոգեբանների կողմից: Սոցիալական դիրքորոշումների, անձնային հատկանիշների, ինքնագնահատականի և սննդային վարքի խնդիրներին անդրադարձ են կատարել հոգեբաններ՝ Ի. Մալկինա-Պիխը, Ա. Դեվյատկինը, Ա. Կոլիշկոն, Ե. Սոկոլովան, Գ. Օլարտը, Ա. Ադլերը, Ս. Աշը Լ. Ավալոսը, Դ. Բեմը, Թ. Քեշը, Գ. Քոմսթոքը, և այլոք: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Ս. Ֆիշերի մարմնի պատկերի և ինքնագնահատականի վերաբերյալ հետազոտությունները, Գ. Գերբների, Լ. Գրոսսի, Մ. Մորգանի և Ն. Սինյորելլիի համատեղ հետազոտությունը անձի վարքի և դիրքորոշումների նկատմամբ մասսայական լրատվամիջոցների ազդեցության վերաբերյալ, Լ. Գրոեսի, Մ. Լեվինի և Ս. Մուրնենի սոցիալական կարծրատիպերի և անձի ինքնագնահատականի կապի վերաբերյալ հետազոտությունը: Այնուամենայնիվ, սննդային վարքի շեղումների խնդիրը շատ ծավալուն է և առայժմ բավարար չափով ուսումնասիրված չեն դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումների առաջացման անձնային և սոցիալական բնույթի դիրքորոշումային պատճառներն ու գործոնները: Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները հիմք են հանդիսանում սննդային վարքի շեղումների առաջացման պատճառահետևանքային ակունքների խնդրի նորովի մեկնաբանության համար:

Հետազոտության նպատակն է՝ Ուսումնասիրել և պարզել, թե որոնք են այն դիրքորոշումները, անձի ինքնագնահատականի,

ինքնավերաբերմունքի և անձնային հատկանիշների օրինաչափությունները, որոնք հիմնային դեր են խաղում սննդային վարքի հուզածին, էքստերնալ և սահմանափակումային շեղումների առաջացման գործընթացում: Տվյալ նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ կոնկրետ **խնդիրները.**

- Ուսումնասիրել անձնային և սոցիալական դիրքորոշումների ձևավորման գործընթացի էությունը՝ գիտական մեկնաբանությունների համատեքստում:
- Ուսումնասիրել գիտական մեկնաբանությունները սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացում սոցիալական պերցեպցիայի, ինքնաընկալման և մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքի ազդեցությունների վերաբերյալ:
- Համապատասխան հոգեախտորոշիչ մեթոդների կիրառման միջոցով բացահայտել դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող, սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող աղջիկների ինքնագնահատականի աստիճանի, բազային համոզմունքների, իռացիոնալ դիրքորոշումների համակարգերի, դժվարությունների հաղթահարման մարտավարությունների առանձնահատկությունները, ինչպես նաև ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը:
- Ստացված օրինաչափությունների հիման վրա մշակել գործնական առաջարկներ՝ դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացումը կանխելու, կամ հաղթահարելու նպատակով:

Հետազոտության վարկածը. Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումներն առաջանում են կանացի արտաքին կերպարին վերագրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի ու անձի ինքնագնահատման արդյունքի զգալի տարբերության հետևանքով:

Ենթավարկածներն են.

- Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, էքստերնալ և հուզածին շեղումների առաջացման պատճառ է դառնում սեփական Ես-ի արժեքավորության զգացման բացակայությունը:
- Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, էքստերնալ և հուզածին շեղումների առաջացման հիմքում ընկած են բազային ապահովության զգացման բացակայությունը և աշխարհի նկատմամբ վստահության պակասը:
- Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, էքստերնալ և հուզածին շեղումների առաջացումը կախված է սեփական անձի և շրջապատի նկատմամբ սպասումների առանձնահատկություններից:
- Սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը տարբեր է:

Հետազոտության օբյեկտն է՝ անձնային բնութագրերի և սոցիալական դիրքորոշումների երևույթի ազդեցությունը դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա:

Հետազոտության առարկան է՝ բազային համոզմունքների, իռացիոնալ դիրքորոշումների և անձի ինքնագնահատականի, ինչպես նաև դժվարությունների հաղթահարման մարտավարությունների ընտրության ազդեցությունը սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել Ա. Ադլերի, Է. Էրիկսոնի, Կ. Ռոջերսի, Ա. Մասլոուի, Է. Ֆրոմմի, Ֆ. Սքինների, Լ. Ֆեստինգերի, Դ. Ուզնաձեյի, Ն. Լանգեյի անձի և դիրքորոշումների մասին տեսությունների մի շարք դրույթներ:

Աշխատանքում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները. Հետազոտության ընթացքում մեր առջև դրված խնդիրների առավել մանրակրկիտ ուսումնասիրման և արդյունքների համեմատության համար կիրառվել են դիտման, զրույցի և հոգեբանական թեսթավորումների հոգեախտորոշիչ մեթոդները: Հետազոտությունում կիրառված հոգեախտորոշիչ թեսթերը մշակված են հանրաճանաչ հոգեբանների կողմից: Դրանք են.

- Տ. Վան Ծթրեյնի գլխավորությամբ մշակված «Սննդային վարքի հոլլանդական հարցաշարը»,
- Ջ. Բաթլերի և Գ. Հայդի կողմից մշակված «ԵՍ իրականի» և «Ես կատարյալի» տարբերությունները բացահայտող թեսթը,
- Ռ. Ջանոֆֆ-Բուլմանի մշակած բազային համոզմունքների հարցաշարը,
- Ա. Էլլիսի կողմից մշակված իռացիոնալ դիրքորոշումների առկայության և արտահայտվածության ախտորոշման հարցաշարը,
- Ռ. Լազարուսի և Ս. Ֆոլքմանի մշակած դժվարությունների հաղթահարման մարտավարությունների որոշման «Գերակշռող վարքի միջոցներ» թեսթը,
- Ջ. Ռավենի ընդհանուր մտավոր զարգացածության աստիճանի չափման «Պրոգրեսիվ մատրիցաների աղյուսակը»:

Հետազոտության գիտական նորույթը. Ատենախոսության շրջանակում կատարված ուսումնասիրությունները թույլ են տվել որոշակիորեն լուսաբանել այնպիսի երևույթներ, որպիսիք են՝ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ առկա դժվարությունների հաղթահարման մարտավարությունների առանձնահատկությունները, իռացիոնալ դիրքորոշումներն ու դրանց ազդեցությունը անձնային և սոցիալական ինքնագնահատականի և, որպես արդյունք, նաև սննդային վարքի շեղումների ձևավորման գործընթացի վրա:

Հետազոտության տեսական նշանակությունը. Հետազոտության շրջանակում իրականացվել է անձնային և սոցիալական դիրքորոշումների վերաբերյալ լայնածավալ գրականության ուսումնասիրություն: Պարզաբանվել է, թե ինչպես են վերջիններն ազդում անձի անձնային և սոցիալական ինքնագնահատականի ձևավորման վրա: Քննարկվել են դրանց հնարավոր ազդեցության մեխանիզմները սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա:

Հետազոտության կիրառական նշանակությունը կայանում է իրականացված հոգեախտորոշիչ աշխատանքների արդյունքում ստացված օրինաչափությունների դուրս բերման և համապատասխան հոգեբանական հանձնարարականների մշակման մեջ, որոնց կիրառումը կնպաստի թիրախային խմբի ներկայացուցիչների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման, կամ հետագա զարգացման կանխարգելմանը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղման առաջացումը կանացի արտաքին կերպարի վերաբերյալ սոցիալ-մշակութային

կարծրատիպերի և անձի ինքնագնահատականի ու ինքնավերաբերմունքի տարբերությունների արդյունքնե:

2. Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղումներն առաջանում են բազային ապահովության զգացման բացակայության արդյունքում:
3. Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումներն ի հայտ են գալիս որպես սեփական Ես-ի արժեքավորության զգացման ցածր մակարդակի հետևանք:
4. Սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումների առաջացման հիմքում են ընկած սեփական անձի և շրջապատի նկատմամբ սպասումների մակարդակի առանձնահատկությունները:
5. Սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը տարբեր է:

Հետազոտության մեթոդների հուսալիությունն ու հավաստիությունը պայմանավորված են աշխատանքի հիմնական նպատակներին ու խնդիրներին համապատասխան հավաստի փոխձարարական մեթոդների կիրառմամբ, փորձարկվողների անհրաժեշտ թվաքանակի մասնակցությամբ և ստացված արդյունքների համալիր վերլուծությամբ:

Աշխատանքի փորձարարական փուլի արդյունքները քննարկվել են «Հայ պետծառայող կանանց ասոցիացիա» ՀԿ-ում կազմակերպված գիտական սեմինարների ընթացքում և մի շարք գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ընդհանուր

եզրակացություններից, գործնական առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ներկայացված են 11 աղյուսակ, 2 նկար: Ատենախոսությունը շարադրված է 156 տպագիր էջերի վրա, առանց հավելվածի՝ 132 էջ: Օգտագործվել է 115 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածական մասում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան և տեսական ու մեթոդաբանական հիմքերը: Պարզաբանված են աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները: Ատենախոսության «Անձնային և սոցիալական դիրքորոշումների տեսությունների վերաբերյալ պատմահոգեբանական ակնարկ» խորագրով առաջին գլուխը նվիրված է անձնային և սոցիալական դիրքորոշումների երևույթների քննարկմանը: Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից՝

1.1. Դիրքորոշումների էությունը, գործառույթները և դրանց հնարավոր ազդեցությունը սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա
1.2. Սոցիալական դիրքորոշումների ազդեցության մեխանիզմները՝ որպես սննդային վարքի շեղումների առաջացման դետերմինանտ
1.3. Սոցիալական դիրքորոշումների ազդեցությունն անձի ինքնաընկալման, ինքնագնահատականի և ինքնավերաբերմունքի ձևավորման գործընթացի վրա

Առաջին ենթագլուխը նվիրված է «անձնային դիրքորոշում» և «սոցիալական դիրքորոշում» տերմինների սահմանմանը, դրանց պարզաբանմանը պատմական և կոնցեպտուալ

հարթություններում, դրանց բնութագրությանը և անձի վարքային դրսևորումների նկատմամբ ազդեցության քննարկմանը:
Երկրորդ ենթագլուխում քննարկվում են սոցիալական դիրքորոշումների ձևավորման վերաբերյալ տարբեր հայեցակետեր և դրանց ազդեցության հնարավոր մեխանիզմները սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա:
Երրորդ ենթագլխում քննարկվում է սոցիալական դիրքորոշումների ազդեցությունն անձի ինքնագնահատականի, ինքնաընկալման և ինքնավերաբերմունքի ձևավորման գործընթացի վրա:
Ատենախոսության երկրորդ գլուխը կրում է «Անձի ինքնաընկալման առանձնահատկությունները՝ որպես սննդային վարքի շեղումների առաջացման ակունք» խորագիրը և բաղկացած է հետևյալ ենթագլուխներից.

2.1 Սոցիալական պերցեպցիայի և անձի ինքնաընկալման ազդեցությունը սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա
2.2 Մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքի ազդեցությունը սննդային վարքի շեղումների առաջացման գործընթացի վրա

Առաջին ենթագլխում քննարկվել է անձի անձնային և սոցիալական ինքնաընկալման երևույթների ինքնությունը: Մանրակրկտորեն քննվել են անձի ինքնավերաբերմունքի ձևավորման պատճառահետևանքային ակունքներն ու գործոնները:
Երկրորդ ենթագլխում տրվել է մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման համար որոշիչ գործոնների բնութագրումը: Մասնակիորեն քննարկվել է ինքնագնահատականի, ինքնավերաբերմունքի, դիսմորֆիկ

երևույթների, աուտոագրեսիվ վարքի երևույթների էությունը, ինչպես նաև սննդային վարքի շեղումների առաջացման հնարավոր հեռանկարները տվյալ հարթությունում:
Առաջնորդվելով աշխատանքի առաջին և երկրորդ գլուխների կաղապարում իրականացված ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքներով՝ կազմակերպեցինք և իրականացրեցինք մեր հետազոտության փորձարարական մասը, ինչի արդյունքները ներկայացված են ատենախոսության երրորդ՝ «Սննդային վարքի շեղումների առաջացմանը նպաստող դիրքորոշումների և անձնային հատկանիշների կապի փորձարարական հետազոտություն» վերնագրով գլխում: Երրոդ գլուխը բաղկացած է մեկ ենթագլխից, որն է.

3.1 Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդների նկարագիրը և արդյունքների վերլուծությունը

Աշխատանքի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքում ուսումնասիրվել են սննդային վարքի սահմանափակումային, հուզածին, կամ էքստերնալ շեղում ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների անձնային, սոցիալական և դիրքորոշումային որակներն ու խնդիրները՝ նախկինում ասպարեզում չամփոփված տեսանկյունից: Հետազոտությունում կիրառվել են դիտման, զրույցի և հոգեբանական թեսթավորումների հոգեախտորոշիչ մեթոդները: Արդյունքում բացահայտվել են հետազոտվողների բազային համոզմունքների և իռացիոնալ դիրքորոշումների, դժվարությունների հաղթահարման մեխանիզմների առանձնահատկությունները, ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը, ինչպես նաև ինքնագնահատականի և ինքնաընկալման խնդիրների առկայությունը: Հետազոտության թիրախային խմբի 200

մասնակիցները հավաքագրվել են Երևան քաղաքի ուսումնական հաստատություններում 14-18 տարեկան 520 աղջիկ սաների շրջանում կատարված թեսթավորման արդյունքում, որում կիրառվել է 1986 թվականին Տ. Վան Ծթրեյնի գլխավորությամբ մշակված «Սննդային վարքի հոլանդական հարցաշարը»:
Հետազոտությունում կիրառված հոգեբանական թեսթերը մշակված են ակնառու մասնագետների հեղինակությամբ:
Հետազոտության արդյունքների քանակական արժանահավատության ապահովման համար հիմք է ընդունվել Կ.Ա. Օտդելնովայի մշակած հետազոտության ճշգրտության չափման աղյուսակը, ըստ որի թիրախային խմբի 200 մասնակիցների շրջանում կատարվող հետազոտության ցանկալի ճշգրտությունը կազմում է՝ 0,2, հավաստիության գործակիցը՝ 2,5-3,0 և արդյունքների հավանականության կանխատեսումը՝ 0,98-0,99 հետազոտության միջին ճշգրտության արդյունքի գործակից:
Թիրախային խմբի 200 մասնակիցներից 102-ի մոտ բացահայտվել է սահմանափակումային, 78-ի մոտ՝ հուզածին և 20-ի մոտ՝ էքստերնալ տիպի սննդային վարքի շեղումների առկայություն:
Հաջորդիվ, հետազոտվողների շրջանում կիրառվել են դիտման և զրույցի հոգեախտորոշիչ մեթոդները, որոնց արդյունքների տրամաբանական և պատճառահետևանքային վերլուծության արդյունքում բացահայտված օրինաչափությունները հաստատվեցին աշխատանքի հաջորդ փուլում իրականացված և հետազոտության ծրագրով նախատեսված հոգեբանական թեսթավորումների արդյունքում:
Ջ. Բաթլերի և Գ. Հայդի մշակած «ԵՍ իրականի» և «Ես կատարյալի» տարբերությունները բացահայտող թեսթի օգնությամբ իրականացված թեսթավորման արդյունքում պարզեցինք թիրախային խմբի մասնակիցների մոտ սեփական անձի և արտաքին տեսքի նկատմամբ վերաբերմունքը:

Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ սննդային վարքի սահմանափակումային շեղման առկայությունը զուգակցվում է սեփական արտաքին տեսքի նկատմամբ դժգոհության բարձր մակարդակով, ինքնաբավարարվածության զգացման բացակայությամբ և շփման խնդիրներով:

Սննդային վարքի էքստերնալ շեղումը զուգակցվում է շրջապատի հավանությանը արժանանալու ձգտմամբ, սեփական կարծիքի և կամային որակների նկատմամբ անվստահությամբ:

Սննդային վարքի հուզածին շեղման առաջացումը զուգակցվում է ներքին հանգստության զգացման և հավասարակշռվածության պակասի, ինքնավստահության ցածր մակարդակի և շփման խնդիրների առկայության հետ:

Հետազոտության մասնակիցների բազային համոզմունքների դուրս բերման համար հետազոտվողների շրջանում կատարվել է Ռ. Ջանոֆֆ- Բուլմանի մշակած բազային համոզմունքների բացահայտման թեսթի կիրառում, ինչի արդյունքում ստացվեցին հետևյալ տվյալները.

«ԵՍ իրականի» և «ես կատարյալի» տարբերությունները. Սննդային վարքի հուզածին շեղում



Սննդային վարքի հուզածին շեղման առկայությունը զուգակցվում է բազային ապահովության զգացման բացակայությամբ՝ մասնավորապես աշխարհի և մարդկանց նկատմամբ վստահության, արդարության, սեփական «ԵՍ»-ի արժեքավորության և ինքնակառավարման ասպարեզներում:

«ԵՍ իրականի» և «Ես կատարյալի» տարբերությունները. Սննդային վարքի էքստերնալ շեղում



Սննդային վարքի էքստերնալ շեղման առկայությունը զուգակցվում է սեփական հնարավորությունների նկատմամբ թերահավատության, ընդհանուր հոռետեսական տրամադրվածության, բացասական կողմնորոշման սոցիալական սպասման բարձր մակարդակի և ցածր ինքնագնահատականի հետ:

«ԵՍ իրականի» և «Ես կատարյալի» տարբերությունները. Սննդային վարքի սահմանափակումային շեղում



Սննդային վարքի սահմանափակումային շեղման առկայությունը զուգակցվում է աշխարհի նկատմամբ վստահության պակասի, արդարության, աշխարհի կառավարելիության և սեփական «ԵՍ»-ի արժեքավորության ասպարեզներում ապահովության զգացման բացակայության հետ:

Հաջորդիվ կիրառված Ա. Էլլիսի իռացիոնալ դիրքորոշումների բացահայտման թեսթավորման արդյունքների հիման վրա ստացվեց հետևյալ պատկերը:

Իռացիոնալ դիրքորոշումների բացահայտում. Սննդային վարքի հուզածին շեղում



Սննդային վարքի հուզածին շեղման առկայությունը զուգակցվում է սոցիալական գնահատականների նկատմամբ գերզգայունությամբ, ներքին ներդաշնակության բացակայությամբ և անընդհատ հոգեբանական լարվածությամբ

Իռացիոնալ դիրքորոշումների բացահայտում. Սննդային վարքի էքստերնալ շեղում

Սննդային վարքի հուզածին շեղման առկայությունը զուգակցվում է սոցիալական միջավայրի պայմաններին ամբողջությամբ վստահելու, դրանց անմնացորդ ենթարկվելու հակվածությամբ և հարմարվողականության բարձր մակարդակով:

Իռացիոնալ դիրքորոշումների բացահայտում. Սննդային վարքի սահմանափակումային շեղում



Սննդային վարքի հուզածին շեղման առկայությունը զուգակցվում է սեփական անձի նկատմամբ չափազանց բարձր պահանջներ դնելու հակումով, ինչը հատկանշական է նաև սեփական մարմնակազմի ձևավորմանն ուղղված վարքային դրսևորումների համար:

Հետազոտության հաջորդ փուլում նախատեսված էր Ռ. Լազարուսի և Ս. Ֆոլքմանի «գերակշռող վարքի միջոցներ» թեսթի կիրառումը, որն ուղղված է դժվարությունների

հաղթահարման մարտավարությունների առանձնահատկությունների բացահայտմանը: Ստացված արդյունքների օրինաչափայինտվյալների հիման վրա ստացվեց հետևյալ պատկերը.



Տվյալ վարքային ռազմավարության ընտրությանը հակված աղջիկները մի կողմից ունեն սեփական մարմնի պատկերի նկատմամբ թերարժեքության զգացման ժխտման միտում:
Այսպիսի անձանց համար բնորոշ է սեփական անձի սոցիալ ական նշանակության ցածր գնահատումը, ինքնաքննադատության և մեղքի զգացման բարձր մակարդակը:



Այս մարտավարությունը նախընտրում են հուզական զսպվածություն ցուցաբերող անձինք, ընդ որում հուզական ապրումները մինիմալ կերպով են ազդում այսպիսի անձանց ընտրության, վարքաձևի, կամ կամային որակների արտահայտման վրա:

Հետազոտության եզրափակիչ փուլում կիրառվել է Ջ. Ռավենի ընդհանուր մտավոր զարգացածության աստիճանի չափման պրոգրեսիվ մատրիցաների աղյուսակը: Թեսթի կիրառման նպատակն էր՝ պարզել, թե արդյոք անձի ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը օրինաչափային նշանակություն ունի սննդային վարքի շեղումների առաջացման համար: Կատարված թեսթավորման արդյունքում պարզեցինք, որ.

ա/ Սննդային վարքի սահմանափակումային շեղում ունեցող 102 հետազոտության մասնակիցների ընդհանուր մտավոր զարգացածության միջին ցուցանիշը՝ ըստ Ջ. Ռավենի պրոգրեսիվ մատրիցաների աղյուսակի միջին արդյունքների, կազմեց 94,85 միավոր, ինչը ցույց է տալիս ընդհանուր մտավոր զարգացածության միջին մակարդակ:

բ/ Սննդային վարքի էքստերնալ շեղում ունեցող 20 մասնակիցների մոտ ընդհանուր մտավոր զարգացածության ցուցանիշն ըստ Ջ. Ռավենի աղյուսակի միջին արդյունքների՝ կազմեց 96,82 միավոր, ինչը ցույց է տալիս ընդհանուր մտավոր զարգացածության միջին մակարդակ:

գ/ Սննդային վարքի հուզածին շեղում ունեցող 78 մասնակիցների մոտ ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակի ցուցանիշն ըստ Ջ. Ռավենի աղյուսակի միջին արդյունքների կազմեց 114,5 միավոր, ինչը ցույց է տալիս ընդհանուր մտավոր զարգացածության նորմայից բարձր մակարդակ:

Ամփոփելով, կարող ենք եզրակացնել, որ ընտրված մեթոդների կիրառելիությունը բխում է ուսումնասիրության բուն նպատակից և ուղղված է գիտական վարկածի ապացուցմանն ու ներկայացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված հետազոտության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումները դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ ձևավորվում են կանացի մարմնակազմի վերաբերյալ սոցիալ-մշակութային և ընտանեկան դիրքորոշումների ու կարծրատիպերի, անձի առաջնային սոցիալական խմբերում գործող սննդային վարքի վերաբերյալ դիրքորոշումների, կարծրատիպերի և ավանդույթների ազդեցության արդյունքում, ինչպես նաև սեփական մարմնի պատկերի և կանացի արտաքին կերպարին վերագրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի անհամատեղելիության հետևանքով:

2. Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումների առաջացման համար նպաստավոր են սեփական Ես-ի արժեքավորության, բազային ապահովության զգացումների բացակայությունը և աշխարհի նկատմամբ վստահության պակասը:

3. Սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումների առաջացման պատճառ է սեփական անձի, կամ շրջապատի նկատմամբ չափազանց բարձր սպասումներ ունենալու հակվածությունը:

4. Դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման պատճառ է հանդիսանում սոցիալ-մշակութային կարծրատիպերի ներքո ձևավորված կանացի արտաքին կերպարին վերագրվող մեծ նշանակությունը՝ մասնավորապես միջսեռային հարաբերություններում:

5. Ընդհանուր մտավոր զարգացածության մակարդակը սննդային վարքի սահմանափակումային, հուզածին և էքստերնալ շեղումներ ունեցող, դեռահասության, կամ վաղ պատանեկության փուլում գտնվող աղջիկների մոտ տարբեր է:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում.

1. Շահինյան Հ. Լ. «Սոցիալական դիրքորոշումների ներքո առաջացած սննդային վարքի շեղումների ուսումնասիրության գործընթացում դիտման և զրույցի հոգեախտորոշիչ մեթոդների կիրառումը», Խ. Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես # 3, Երևան 2015, էջ 114-122
2. Շահինյան Հ. Լ. «Անձնային և սոցիալական դիրքորոշումները որպես դեռահաս աղջիկների մոտ սննդային վարքի շեղումների առաջացման պատճառ», Մետափիլիսոփայության, փոխակերպման տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի «ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ» Գիտական պարբերական # 1(4), 2015, էջ 187-194
3. Շահինյան Հ. Լ. «Սննադյին վարքի շեղումների առաջացման դրդապատճառների վերլուծությունը դասական հոգեբանների անձի տեսությունների համատեքստում», «ԿԱՆԹԵՂ» գիտական հոդվածների ժողովածու , # 2 (67), 2016, էջ 170-176
4. Շահինյան Հ. Լ. «Սննդային վարքաձևի բուլիմիկ և անոռեկսիկ խեղաթյուրումներ առաջացնող սոցիալ-հոգեբանական դետերմինանտները», Խ. Աբովյանի անվան

Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի «Գիտական Տեղեկագիր» # 2(19), 2014, էջ 24-30
5. Շահինյան Հ. Լ. «Պերֆեկցիանիզմը՝ որպես սննդային վարքի մոդելների դեֆորմացման պատճառ», ՀՀ ԳԱԱ Գիտակրթական Միջազգային Կենտրոն, «Գիտական Հոդվածների ժողովածու», Երևան, 2014, էջ 132-137
6. Շահինյան Հ. Լ. «Նյարդային անոռեկսիան և բուլիմիան՝ որպես սննդային վարքաձևի խանգարումներ. Դրանց ընդհանուր, կլինիկական և հոգեբանական նկարագիրը և հոգեվերլուծական որոշ դրույթներ», Խ. Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի «Գիտական Տեղեկագիր» # 2(12), Երևան, 2009, էջ 79-89

ШАГИНЯН АСМИК ЛЕВОНОВНА

РОЛЬ СОЦИАЛЬНЫХ УСТАНОВОК В ПРОЦЕССЕ ФОРМИРОВАНИЯ ОТКЛОНЕНИЙ ПИЩЕВОГО ПОВЕДЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03. “Социальная психология(межличностные отношения, семейная, возрастная, педагогическая, групповая деятельность)”.

Защита диссертации состоится 20 июня 2017г., в 12.00 ч. на заседании специализированного совета по психологии 064 ВАК-а по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете имени Хачатура Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Данная диссертационная работа посвящена изучению роли социальных установок и личностных качеств девочек подростков в формировании ограничительных, эмоциогенных и экстернальных отклонений пищевого поведения.

Актуальность работы обусловлена многогранностью темы возникновения отклонений пищевого поведения и тем вниманием, которое в современной психологии уделяется данному вопросу.

Научная новизна исследования состоит в том, что в работе впервые подвергаются всестороннему исследованию воздействия социальных установок и личностных качеств на формирование ограничительного, эмоциогенного и экстернального пищевого поведения у девочек подростков.

Целью работы является изучение личностных качеств, социальных установок, личностной и социальной самооценки и уровня интеллектуального развития девочек подростков страдающих ограничительными, эмоциогенными и экстернальными расстройствами пищевого поведения. Основные задачи исследования:

1. Исследование научных определений сути явлений личностных и социальных установок.

2. Исследование научной литературы по теме роли социальной перцепции, самооценки и самоотношения личности в процессе возникновения отклонений пищевого поведения.

3. С помощью соответствующих психодиагностических методик выявление уровня самооценки, базовых установок, структуры иррациональных установок, стратегий преодоления трудностей, а также уровня общего интеллектуального развития у девочек подростков с отклонениями пищевого поведения ограничительного, эмоциогенного и экстернального типов.

4. Определить степень влияния личностных качеств на процесс возникновения данных отклонений пищевого поведения у девочек подростков.

5. На основе полученных закономерностей разработать модели предотвращения и преодоления отклонений пищевого поведения у девочек подростков.

Гипотеза исследования

Пищевые отклонения у девочек подростков появляются в результате существенной разницы между социально-культурными стериотипами о женской внешности и самооценки личности. Достоверность результатов обусловлена методологической обоснованностью, соответствием цели, гипотезы и задач, а также использованными методами. Теоретические положения и выводы работы получены на основе многостороннего научного анализа и статистической обработки экспериментальных данных.

Результаты исследования были обсуждены на организованных научных семинарах, и были опубликованы в научных статьях.

Структура работы. Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка литературы и приложений. Представлены 11 таблиц, 2 рисунка, а также 115 источников литературы. Объем работы составляет 156 страниц, без приложений – 132 страницы. По теме диссертационной работы были опубликованы шесть научных статей.

SHAHINYAN HASMIK

THE ROLE OF SOCIAL ATTITUDES IN THE PROCESS OF EATING DEVIATIONS FORMATION

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in speciality 19.00.03. “Social Psychology (interpersonal relations, family, age, pedagogical, group activities)”.

The official defense of the thesis will take place at Higher Attestations Commission’s 064 Degree-awarding Scientific Council’s session on June 20, 2017, at 12.00 PM Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (Address: 0010 Yerevan, Tigran Mets 17)

SUMMARY

The present dissertation thesis is devoted to the study of the role of social attitides and individual characteristic qualities of adolescent girls in forming restrictive, emotional and external eating deviations.

The relevance of the research is based on versatility of the source of eating deviations formation and the attention attached to this subject in modern Psychology.

The scientific novelty of the research is that this is the first in its kind to study in depth the impact of social attitudes and individual characteristic qualities in the process of restrictive, emotional and external eating deviations formation in adolescent girls.

The research **aims** at studying personal characteristic qualities, social atttudes, personal and social self-esteem and the level of intellectual development of adolescent girls suffering from restrictive, emotional and external eating deviations.

The main objectives of the study are as follows:

1. To research for scientific definitions of the essence of personal and social settings.
2. To study the existing scientific literature on the role of social perception, self-esteem and the self-identity in the process of developing eating deviations.
3. Based on corresponding psychodiagnostic methods, to identify the levels of self-esteem, fundamental settings, the structure of irrational settings, the strategies of

coping as well as the level of overall intellectual development of adolescent girls with eating deviations of restrictive, emotional and external types.

4. To determine the degree of influence of personal characteristic qualities towards the process of development of mentioned types of eating deviations among adolescent girls.

5. Based on the regularities revealed in the study, to develop models of prevention of eating deviations formation or development among adolescent girls.

The hypothesis of the study.

Eating deviations among adolescent girls emerge as a result of existing differences between socio-cultural stereotypes about female appearances and personal self-esteem.

The reliability of the study results is determined by the methodological validity, aim congruence, hypothesis and problems as well as by methods in use.

Multilateral analysis and statistical experimental data processing are the fundamentals for theory based facts and conclusions of the study.

The study results were outlined in a number of scientific seminars and were consequently in scientific articles.

The dissertation consists of *Introduction, three chapters, Conclusions, bibliography and anex.* The dissertation presents 11 tables, 2 pictures as well as 115 sources of literature.

The volume of the study. The dissertation contains 156 pages, without annexes - 132 pages.

Six scientific articles have been published on the subject of the thesis.